

Թիւնն ընդունելէն ետքը երբ հրաւիրուեցաւ Նոր Զուղայ, ունեցաւ առիթ տեսնուելու հոն տեղւոյն լատին առաքեալներու հետ<sup>2</sup>: Շատ կանխակալ կարծիքներ տեղի տուին: Զգաց ինքն ալ հայ եւ լատին եկեղեցիներու մերձեցման, բարեկամական աղերսի հարկաւորութիւնը: Անջատման դժերը չհամարեցաւ այնքան կարեւոր՝ կարեւորագոյնէն հրաժարելու համար: Նախ անձամբ տուաւ իւր հաւանութիւնը ենթարկուելու Հռովմայ Ս. Գահին ճոխութեան եւ ապա խոստացաւ վէճի առարկայ կէտերը դնել եպիսկոպոսներու ժողովի քննութեան:

Տրամադրութիւններու հոսանքի մասին, որ կ'իշխէր յատկապէս ի Նոր Զուղայ, գեղեցիկ կը գրէ Բոկոտն Կարմեղեանց մեծաւորն Ֆրա Եւզինիոս զի Սան Բենեդեկետո, որ 1624—1626 տարիներուն այցելած էր իւր Կարգին առաքելութիւններն ի Պարսկաստան, Ս. Ժողովին առջեւ դրած իւր Տեղեկագրին մէջ (24 Փետր. 1627)<sup>3</sup>.

<sup>2</sup> Յիշատակագիր մը կը գրէ 1632ին. «Ես Խօջա Պօղոս Թաւաքալեցի Մանսուրի տղայ զնեցի զայս (Խազ) տետրս իմ եղբայր Գրիգոր քահանային համար ի Թուականութեանս Հայոց ՌԶԱ. ի հայրապետութիւն սուրբ Իջմիածնայ տեառն տէր Մովսէս կաթողիկոսին եւ Թագաւորութիւն Պարսկաց շահ Ապասին Թոռան շահ Ալֆուն. եւ է յաթոռ շահ Ալֆուն Սպահան որ կոչի Շօշ. եւ անդ կան քրիստոնեայք բազում եւ ունին վանք եւ անապատք մարդկանց եւ կուսանաց. եւ եկեղեցիք Հայոցս ԺԵ եւ Ֆոանկաց Բ»: Հ. Աճառեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի, էջ 33:

<sup>3</sup> Գիւան Հաւատոյ Տարածման Ս. Ժողովին. Հասար 189 (Lusitania, India et Japonia, 1629), էջ 258—259: